«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 98 546 497
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT06-2203-C (1003)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 6-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստի

Ամսաթիվ՝	10 մարտի 2022 թ.
Անցկացման վայր՝	Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	09:30

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝

Ռուբեն Հարությունյան - ՀԽ նախագահ,
Աշոտ Մկրտչյան,
Արտավազդ Մինասյան,
Դավիթ Փախչանյան,
Լիլիթ Մինասյան,
Ռիմմա Անանյան,
Իրինա Գեյկո,
Սարգիս Բադալյան,
Վասկեն Յակուբյան,
Տիգրան Հարությունյան :

Նիստին չի մասնակցել՝

Արսեն Գալստյան

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամից տասը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցում էին.

Դավիթ Սահակյան (գործադիր տնօրեն),
Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը,
Տեր Մեսրոպ քհն. Արամյան («Այբ» դպրոցի ՀԽ-ի հիմնադիր նախագահ),
Անահիտ Ադամյան (Ուսման վարձի վերանայման հանձնաժողովի անդամ),
Հայկ Պողոսյան (Գործառնական տնօրեն),
Նելլի Բալայան (Ֆինանսների կառավարիչ):

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել:

Ռուբեն Հարությունյանը ներկայացրեց արտահերթ նիստի օրակարգը: Դավիթ Սահակյանն առաջարկեց ավելացնել «Առաջին դասարանում դասարանի ավելացում» հարցը:

Որոշում՝ հարց 1

1. Հաստատել ՀԽ-ի նիստի 2022 թվականի մարտի 10-ի օրակարգը:

2. Ավելացնել հարց 3. Առաջին դասարանում դասարանի ավելացում:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 2. Ուսման վարձի վերանայման հարց: Ուսման վճարի մաս կազմող տրանսպորտային փոխադրման վճարի վերանայման հարց:

Որոշում՝ հարց 2

Որոշվեց

1. 2022-23 ուստարվա ուսման վարձը սահմանել ըստ ստորև ներկայացված աղյուսակի.

	Տարրական դպրոց /ՀՀ դրամ/	Միջին դպրոց /ՀՀ դրամ/	Ավագ դպրոց /ՀՀ դրամ/
Նույն ընտանիքից մեկ երեխա	3’000’000	3’000’000	3’000’000 կամ կարգավորվում է ֆինանսական աջակցության համակարգով[1]
Նույն ընտանիքից երկրորդ երեխա	2’550’000	2’550’000	2’550’000 կամ կարգավորվում է ֆինանսական աջակցության համակարգով
Նույն ընտանիքից երրորդ և հաջորդող երեխաներ	2’400’000	2’400’000	2’400’000 կամ կարգավորվում է ֆինանսական աջակցության համակարգով
«Այբ» համակարգի երեք քառորդ և ավելի դրույքով աշխատակցի երեխա	1’500’000	1’500’000	1’500’000 կամ ֆինանսական աջակցության համակարգով[4]
«Այբ» համակարգի կես դրույքից երեք քառորդ դրույքով աշխատակցի երեխա	2’250’000	2’250’000	2’250’000 կամ ֆինանսական աջակցության համակարգով

[1] «Այբ» ավագ դպրոցում գործում է ֆինանսական աջակցության համակարգ: Այն բանից հետո, երբ աշակերտը ընդգրկվել է ընդունվածների ցուցակում, նա, ըստ անհրաժեշտության, կարող է դիմել **«Այբ» կրթական հիմնադրամի** ֆինանսական աջակցության հանձնաժողովին՝ նոր ուսման վարձ սահմանելու նպատակով:

[4]«Այբ» համակարգի աշխատակիցը կարող է դիմել «Այբ» կրթական հիմնադրամին՝ ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով, եթե նրա երեխան ընդունվել է «Այբ» ավագ դպրոց:

«Այբ» համակարգի մինչև կես դրույքով աշխատակցի երեխա	2’550’000	2’550’000	2’550’000 կամ ֆինանսական աջակցության համակարգով

Որոշումը կայացված է՝ ինը կողմ, մեկ ձեռնպահ

2. 2023-2024 ուստարվանից սկսած ուսման վարձի փոփոխության քաղաքականության (արտացոլված է ուսումնառության մասին պայմանագրի 5.2 կետում) մեջ կատարել փոփոխություն, համաձայն որի, ամեն հաջորդ տարվա ուսման վարձը ենթակա է վերանայման՝ տվյալ տարվան նախորդող տարվա պաշտոնական գնաճի առնվազն 50%-ի չափով:

Որոշումը կայացված է՝ վեց կողմ, չորս դեմ

3. 2022-23 ուսումնական տարվա համար սահմանել տնից դպրոց և հակառակ ուղղությամբ տրանսպորտային փոխադրման նոր արժեք. ավագ դպրոցում՝ 160՛000 ՀՀ դրամ, իսկ միջին և տարրական դպրոցում՝ 180՛000 ՀՀ դրամ, ինչը նշանակում է աժեքի վերանայում վերջին տարվա պաշտոնական գնաճի սահմաններում (7.4%)՝ կլորացնելով դեպի ներքև:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 3. Առաջին դասարանում դասարանի ավելացում:

Որոշում՝ հարց 3

Որոշվեց 2022-23 ուստարում բացել լրացուցիչ առաջին դասարան:

Որոշումը կայացված է՝ ինը կողմ, մեկ ձեռնպահ

Հանձնարարություն: Դավիթ Սահակյանին հանձնարարել «Այբ» հիմնադրամի հետ համատեղ մարտ ամսվա ընթացքում կազմակերպել ՀԽ արտահերթ նիստ կամպուսի զարգացման, ընդլայման վերաբերյալ՝ տարրական, միջին, ավագ դպրոցներ, ինչպես նաև մանկապարտեզ:

Կետ 4 ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր:

Բոլոր հարցերը ներկայցնել մայիսի 05-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:

Կետ 5. Նիստի ավարտ

Հանդիպումն ավարտվեց ժամը 11:05-ին:

ՀԽ անդամներ

Աշոտ Մկրտչյան _____

Արտավազդ Մինասյան _____

Դավիթ Փախչանյան _____

Լիլիթ Մինասյան _____

Ռիմմա Անանյան _____

Իրինա Գեյկո _____

Սարգիս Բաղալյան _____

Վասկեն Յակուբյան _____

Տիգրան Հարությունյան _____

ՀԽ նախագահ

Ռուբեն Հարությունյան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____